

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՋԱՏԿԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ

Հոգևոր Ճեմարանի ուսանողները մասնակցեցին Զատկի տոնական օրերի ժամերգություններին և պատարագի արարողություններին ոչ միայն Մայր Տաճարում, այլև Վաղարշապատի, Օշականի, Երևանի և Արտաշատի եկեղեցիներում։

ՋԱՏԿԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ

Հոգևոր Ճեմարանի ուսանողները Զատկի առթիվ ստացան մի շարաթվա արձակուրդ։ Իրենց ծնողների մոտ մեկնելուց առաջ նրանք լսեցին Ճեմարանի վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանի հայրական խրատները հոգևորականի վայել լուրջ ու անբասիր կյանք ունենալու և արձակուրդի օրերը լավագույն կերպով օգտագործելու մասին։ Արձակուրդները վերջացան ապրիլի 8-ին։ Ճեմարանի բոլոր ուսանողները վերադարձան և դասավանդությունները վերակսկսեցին ապրիլի 9-ին՝ երկուշաբթի օրը։

ՔՆՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 19-ին և 20-ին Հոգևոր Ճեմարան այցելեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պ. Արամ Աղաջանյանը, ներկա եղավ դասավանդություններին, ուսանողների ճաշին և հետաքրքրվեց հաստատության ներքին վիճակով։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՇԱՎ

Հայոց պատմության և գրականության դասերին սատարելու նպատակով, Հոգևոր Ճեմարանի ուսանողները մշակութային արշավ կատարեցին դեպի Զվարթնոց և քնարերգակ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը։ Ուսանողներին ընկերակցում էին Ճեմարանի վերատեսուչը, վերակացուն և Հայոց պատմության, Հայոց լեզվի և գրականության դասատուները։ Ուսանողները լսեցին դասատու պ. Մ. Մկրտումյանի ղեկուցումը բանաստեղծի կյանքի և գործունեության մասին։